

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ՇԻՐԱԶԻ ՀՈԳԵՂԵՆ ՈՒ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՊԸ

Յուրաքանչյուր գրող, ունենալով իր ինքնատիպությունը, անհատականությունը, պոեզիայի էության իր ուրույն ըմբռնումները, միաժամանակ չի կարող աշխարհընկալման, մտածողության, գեղագիտական հայացքների որոշակի ընդհանրություններ և ներքին աղերսներ չունենալ ուրիշ գրողների հետ: Թումանյանն սկսնակ բանաստեղծներին տված խորհուրդներում նշում է. «Ազդեցությունը էն սանդուղքն է, որով սկսնակը բարձրանում է դեպի ինքնությունությունը»¹: Սակայն, ինչպես նկատում է Գ. Մահարին, Շիրազը «սկսնակի նախակրթարան չընկավ... Նրա քնարերգության այբուբենը շատ է հեռու այբուբեն լինելուց»²: Բայց և այնպես Շիրազը բոլորովին կտրված չէ իր բանաստեղծական միջավայրից, իր ժամանակակիցներից ու անմիջական նախորդներից: Տեսնում, զգում, ուսումնասիրում, գնահատում է նրանցից յուրաքանչյուրին ու դրանով հաստատում իր ստեղծագործական ու հոգեղեն կապը նրանց հետ: Խոսքը, իհարկե, չի վերաբերում պարզ նմանություններին: Ինչպես հավաստվում է մի շարք գրավոր աղբյուրներում, Ե. Չարենցը Հ. Թումանյանի դասեր՝ Նվարդի և իրավաբան Գրիգոր Չուբարյանի հետ ունեցած զրույցում ասել է. «Նա հենց առաջին ոգումից, ինչպես թվում է ինձ, ինքն է որ կա, միայն ինքը: Սա ոչ մի ուժի, գուցե ասենք ոչ մի սրի տակ չի մնա: ...Սեր իմաստուն ժողովրդի խորքից, մեր հանճարեղ գրականությունից է գալիս»³:

Թումանյանի քնարերգության հետ Շիրազին առաջին հերթին կապում է մարդկայնության մեծ երազանքը, մեր ազգային պոեզիային բնորոշ կատարյալ մարդու իդեալը: Ղարերի զիզգազներում հայն ստիպված է եղել հաղթահարել շատ փորձություններ պետության կորուստ, ազգի երկփեղկվածություն, պատերազմներ, կոտորածներ, արհավիրքներ, գաղթ... Այս ամենին դիմագրավելու համար մարդը պետք է ունենա աննկուն հոգեկան կորով, ոգու անկոտրում ուժ, մարդկայինի, կատարյալի հավերժական ձգտում: Այս գիտակցությունն առկա է դեռևս Մաշտոցի ապաշխարանքի երգերում, Խորենացու ստեղծագործություն-

¹ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, տասը հատորով, հ. 7, Ե., Հայաստանի ԳԱ, 1988, էջ 302:

² Գ. Մահարի, Մ. Աղաբաբյան, Հ. Թամրազյան, Մ. Սարգսյան, Հ. Շիրազի մասին, Ե., 1974, էջ 5-6:

³ Գ. Մահարի, Մ. Աղաբաբյան, Հ. Թամրազյան, Մ. Սարգսյան, Հ. Շիրազի մասին, Ե., 1974, էջ 5-6:

ներում, առավել ցայտուն ուրվագծվում է Նարեկացու և ողջ միջնադարյան քնարերգության մեջ, որտեղ գծագրվել է տառապանքների միջոցով մարդու մաքրագործման, ապա նաև աստվածացման ուղին: Ազգային այս երակից է սնունդ առել Թումանյանի պոեզիան: Նրա բանաստեղծություններում, պոեմներում, քառյակներում շարունակաբար հնչում են գեղեցիկի, վեհի, կատարելության երազանքի հավիտենական դողանքները: Այդ դողանքների արծազանքն է Շիրազի բնարը ևս, իսկ «Բիրլիականն» այս առումով անգուզական է թե գաղափարական բովանդակությամբ, թե գեղարվեստական կատարելությամբ, ծևի և բովանդակության ներդաշն համաձուլվածքով: Մարդու բարոյությանը վերաբերող ամեն ինչ հետաքրքրում է Շիրազին՝ իբրև քնարական ներշնչանքի աղբյուր: Այստեղ ևս նա Թումանյանի անմիջական հետևորդն է: Իմանալով, որ մեծ լոռեցին ծրագրել, բայց չի կարողացել իրականացնել մի պոեմ Անիի Օհանես Սմբատ բազավորի կյանքից ինքն է ձեռնամուխ լինում դրա իրականացմանը, մասնավոր, որ իրեն էլ հոգեհարազատ էր դա: «Թումանյանը չէր կարող գետնաքարշ որսի վրա գնալ»⁴, - ասում է Շիրազը: Հիշենք նաև Թումանյանի «Հայոց լեռներում» բանաստեղծությունը և Շիրազի «Վերելքը», որը վերահիստարակության մեջ բանաստեղծը վերնագրեց «Հայ ժողովրդի երգը»՝ ժամանակների, հանգամանքների առանձնահատկությունները հաշվի առնելով դժվար չէ տեսնել Թումանյանի և Շիրազի հոգևոր ծննդաբանության միասնականությունը: Միջնադարյան քնարերգությանը բնորոշ հավատի, կենսասիրության, մաքառման ոգին է միավորում այս բանաստեղծներին:

Ժողովրդական մտածողությունն է այն ակունքը, որտեղից սկիզբ է առնում Թումանյանի և Շիրազի հոգեհարազատությունը: Ժողովրդի հոգեբանության, նրա ձգտումների, մարդասիրության և ժողովրդասիրության դիրքերից են նրանք մոտենում գրականությանը: Նրանց մտածողության վրա զգալի է հատկապես հայկական էպոսի ազդեցությունը: Մեր հերոսական էպոսի մտածողության կերպը գաղափարաբանությունը, ոճաբանությունը, ժողովրդական պաթոսն իրենց կնիքն են դրել այդ երկու բանաստեղծների ստեղծագործությունների վրա⁵՝ ժողովրդականի հանդեպ ունեցած սիրով է պայմանավորված բանահյուսական սյուժեների, ժողովրդական ոճերի, առանձների, դարձվածքների առատությունը նրանց գործերում: Ժողովրդի բուն ոգին արտահայտվում է ոչ միայն բանահյուսական նյութի մշակմամբ, այլև մեր ժողովրդի ազգային զգացմունքների, հույսերի, երազանքների պատկերմամբ: Ինչպես Թումանյանի, Շիրազի մոտ ևս հանդիպում ենք առակների, կենցաղանկարների, ծոներգերի և

⁴ Չ. Շիրազ, Մի փետուր իմ արծիվ կյանքից, «Հայաստան», Ե., 1984, էջ 58

⁵ Այս մասին հանգամանորեն տես մեր «Հովհաննես Շիրազի բանավեստը» թեկնածուական ատենախոսությունը (Հայաստանի ազգային գրադարան):

Թումանյանի քնարական հերոսը, թվում է, հասել է (կամ գրեթե հասել է) ներդաշնակ կեցության բարձրակետին, երբ գրում է.
Հատորն ու էջն այսուհետ կնշվեն մեջքերումներին կից, V հատորը, որը պետք է ընդգրկեր «Հայոց դանթեական» և «Անի» պոեմները, այդպես էլ չտպվեց:

Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,-
Վատը՝ լավ եմ տեսել ես⁹:

Տանել դավը, ապա ներել, իսկ բարձրակետը՝ քեզ նենգողին, դավողին սիրել: Սա արդեն աստվածային էությանը բնորոշ երևույթ է:

Շիրազի հերոսը թշնամու համար ներում է հայցում Աստծուց, իսկ ինքը «հառաչում է», ուրեմն՝ ցավ է ապրում, տառապում է, ներողի հոգին խաղաղված, հանդարտված է լինում.

Թշնամիներիս դու ներիր, աստված,
Ես քո չափ մեծ չեմ,
Որ չհառաչեմ,
Թե ներես՝ իցիվ զղջան՝ մաքրված,
Իցիվ քեզ նման
իրավ սրբանան (I, 187):

Շիրազի ներաշխարհի ինքնավերլուծությունն է «Ինքներգանք՝ համամարդկային» պոեմը: Ընթերցողին թվում է, թե բանաստեղծի հոգին, որ մշտապես ալեկոծ է հակադիր բևեռացումների անհամգրվան բախումներով, փոթորկում են համատիեզերական, համամարդկային հակասությունները: Բայց այդ անլուծելի հակասությունների հոսքից հանկարծ դուրս է ցայտում պատկերային մի շիթ, որ հիշեցնում է, թե բանաստեղծի գիտակցության մեջ երբեք չի մնջում նրա բոլոր ստեղծագործական մղումներն ուղղորդավորող ազգային ցավը.

Ավա՛ղ, ինձ էլ մեկ թվում եմ ես մի խենթ,
Մեկ էլ տեսար իմաստուն,
Մեկ հաշտվում, մեկ կռվում եմ ես ինձ հետ,
Մեկ արքա եմ, մեկ անտուն (II, 109):

Բայց հանկարծ

Մեկ թռչում եմ դեպի մայր ծովն իմ Վանա,
Դառած խոյանքն իմ ազգի,
Մեկ աստափում, թե չլինի՞՝ Սևանա
Ծովակ աչքս էլ ցամաքի... (II, 109):

Այսպիսի պատկերների մեջ արտահայտվել է նաև հայ բանաստեղծի համատիեզերական մտաթռիչքների և ազգային ցավի անհամատեղելիության դրա-

⁹ Գ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 21:

ման, որ սրված էր հատկապես XX դարի սկզբին: Հիշենք, օրինակ, Թումանյանին. «Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում...»¹⁰:

Հայ քնարերգությունը ծագումնաբանորեն և զարգացման դարերի ամբողջ ընթացքում մինչև մեր օրերը, եղել է Արևելքի և Արևմուտքի մշակութային խաչածուկների կիզակետում. մերթ գերակայություն են ստացել արևելյան, մերթ՝ արևմտյան արժեքներն ու լեզվամտածողությունը: Տարիների ընթացքում ձևավորվել է հստակ համոզմունք Արևելք-Արևմուտք հակադրության շուրջ: Ըստ այդմ՝ Արևելքն ու Արևմուտքը պատմական, մշակութային, բարոյափիլիսոփայական տարբեր աշխարհներ են:

Հայացքը հառելով Արևելք՝ Թումանյանը 1919 թ. գրում է. «Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն»¹¹ սկսվածքով քառյակը, որտեղ Արևելքը բանաստեղծի համար խորհրդանշում է «մի վերին իդեալական աշխարհ»¹²: Իսկ 1921թ. Արևելք-Արևմուտք հակադրությունն արդեն ավելի որոշակի ու բացահայտ է.

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,
Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու
Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ
Դեպ Արևելքն աստվածային-հայրենիքը իմ հոգու...¹³:

Պետք է նշել, որ Թումանյանը տարբերել է Արևելքի երկու ըմբռնում. մեկը՝ հին Արևելքը՝ իր հոգևոր գանձերով, մյուսը՝ Թուրքիայի բերած «խավարն ու բարբարոսությունը» (Հ. Թ.), որը խորթ է արևելյան մշակույթի ոգուն:

Շիրազի պատկերամտածողությունը, լինելով 20-րդ դարի երևույթ, անհարժեշտաբար հաղորդակցվելով արևմտյան գեղագիտական մտքի նորագույն բացահայտումների հետ, ուր գերակայող է ռացիոնալ-տրամաբանական մտածելակերպը, և մեծ մասամբ ստեղծագործաբար վիճարկելով դրանք, գիտակցորեն և ենթագիտակցաբար հակված է դեպի արևելյան ճոխ լեզվամտածողությունը, երևակայության սահմաններ չճանաչող ծավալումներն ու միաժամանակ կենսական իմաստությունների, գաղափարական մտադրությունների խտացումը մեկ պատկերի կարճառոտ տարածության շրջանակներում: Արևելյան նստվածքները Շիրազի քնարական աշխարհընկալման մեջ լավ երևում են հատկապես բնության հետ նրա ստեղծագործական հարաբերություններում: Խոսքը միայն այն մասին չէ, որ նրա քնարերգության մեջ ևս իռլով-

¹⁰ Նույն տեղում, հ. 1, 1988, էջ 269:

¹¹ Նույն տեղում, հ. 2, էջ 36:

¹² Է Ջրբաշյան, «Արևելք-Արևմուտք» հակադրությամբ Հովհ. Թումանյանի ըմբռնմամբ, «Պատմա-բանասիրական հանդես», ՀՀ ԳԱԱ, Ե., 1998, N 1-2, էջ 45:

¹³ 13. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 49:

վում են բներգության գրեթե բոլոր հավերժական թեմաներն ու խորհրդանշանները, ինչպես բնությունը հավերժական է, մարդը անցողիկ, կյանքը և մահը բնության անվերջ գոյության ձևերն են, մարդը բնության անբաժանելի մասնիկն է, բնության գլուխգործոցն է, միաժամանակ նրա տիրակալը և այլն: Շիրազյան առանձնահատուկը, անկրկնելին այն է, որ նրա պատկերամտածողության հիմնական, գրեթե միակ ատաղձանյութը բացառապես բնությունն է՝ գույների, ձևերի, հնչյունների անսպառ բազմազանությամբ:

Երկու դեպքում էլ բանաստեղծական տարերքի, ստեղծագործական անհատականության հիմնական որոշիչը մնում է մտածողության վառ արտահայտված պատկերավորությունը, խոսքի փոխաբերացման հակումը, ներքին և արտաքին տեսողության անսպառ գունախաղերը և այլն: Շիրազի մոտ ևս, ինչպես Թումանյանի, «բնությունը հաղորդակից է լինում մարդկային ճակատագրին»¹⁴: Սարդու և բնության այս մտերմությունը միտված է նաև լուծելու մարդու և բնության օտարացման խնդիրը: Շիրազի գրչի թեթև հպումով կենդանանում, մարդկային հատկանիշներ են ծնոք բերում բնության առարկաներն ու երևույթները, կենդանիներն ու թռչունները, ամբողջ տիեզերքը, հարազատ ու մտերիմ է թվում ողջ բնությունը: Շիրազը գարնան երգիչ է: Բայց գարունը իբրև ինքնակա զեղեցիկ բնանկար, նրա քնարերգության մեջ համարյա չի հանդիպում: Բնությունն ապրում ու շնչում է բուռն տարերքով անմիջական, բնական: Ձարմանալիորեն հասկանալի ու դյուրընկալ են դառնում աներևակայելին, անսահմանը, չափազանցը, «Եվ հառաչեցին լեռները ցավից» (II, 6), «Ամպերով գոռաց երկինքը գարիոր» (II, 7):

«Քրիստոնյա Արևելքում կապվածությունը հայրենի տան ու նախնիների հետ առանձնահատուկ է: ...Տունն Արևելքում ժամանակակից ուրբանիզացված կենտրոնների բնակարանը չէ, որն ունի ուսիլիտար գործառույթ և կարելի է հաճախակի փոխել կամ վաճառել: Այն անցածներից մնացած պաշտամունքարժեք է, սպիրիտուալ կենտրոն՝ կապված այս կամ այն անհատի, նախահոր անվան հետ: Հայաստանում նախնիներից մնացած տունը բովանդակում է ինտեգրացնող արժեքային իմաստ ընդհանուր նախահայր ունեցող հարազատների խմբի համար ...»¹⁵: գրում է Ք. Գիշանը:

Տունը՝ որպես նախնիներից մնացած պաշտամունքարժեք, թե Թումանյանի, թե Շիրազի մոտ, յուրահատկությամբ հանդերձ, խոր արմատներ ունի նրանց մտածողության մեջ Թումանյանի մոտ տունը «էն չքնաղ երկրի»:

¹⁴ Չ. Ավետիսյան, Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, ԶՄՄՀ ԳԱ, Ե., 1973, էջ 32

¹⁵ Ք. Գիշան, Մահվան արևելյան և արևմտյան արժեքային կոդմոդոլոմների շուրջ «Քաներթ», ԵՊՀ, 2004, քիվ 2, էջ 99-108

«հայրենի օջախի», հարազատների կարոտն ու սպասումն է. իսկ լայն իմաստով հոգևոր ու մարդկային ներդաշնակ կեցության համգրվամը «Ա՛խ. թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտեղ, դեպի տուն»:

Շիրազի քնարերգության մեջ տուն հասկացությունն առանձնանում է ամենից առաջ մեր աշխարհագրական և մշակութային ամբողջականության իմաստով: Հիշենք «Հրաշք ոգեգալուստի» բանաստեղծության մեջ հոր պատգամը. «Տունս կիսատ չթողնես» (IV-153): Ազգային խորհրդանիշների կորուստը, որոնք մեր ազգային ինքնության ձևավորման գործում առանցքային դեր են խաղացել, Շիրազի հայացքը բևեռում են մեր անցյալին՝ ողբերգական շեշտեր հաղորդելով նրա քնարերգությանը:

Ժխտելով «գործնական Արևմուտքի» (Հ. Թ.) մարդկային հարաբերություններն ու բարոյական ընթրումները՝ թե Թումանյանը, թե Շիրազը հակվում են դեպի «հոգևոր Արևելքի» (Հ. Թ.) բարոյագեղագիտական իդեալները. Այդ հակվածությունը չի ենթադրում արևելյանի կտրուկ բացարձակացում: Նրանց ստեղծագործություններն իրենց խորքում արևելյանի և արևմտյանի յուրօրինակ համադրություն են, հորիզոնական և ուղղահայաց չափումների սինթեզ: Հենց արևելյան և արևմտյան մտածելակերպի ու աշխարհընկալման առանձնահատկություններով է պայմանավորված Շիրազի հոգեհարազատությունը ոչ թե իր անմիջական նախորդների Չարենցի, Տերյանի հետ, այլ արևելյան մտածողությանն առավել հարազատ թումանյանական, իսահակյանական փնի:

1968 թ. Մահարին գրում է. «Եկավ Հ. Շիրազը ամրանալու Նարեկացի-Թումանյան-Իսահակյան եռանկյունում»¹⁶: Այս բնորոշմամբ Մահարին ընդգծում է Նարեկացի-Սիամանթո-Ս. Մեծարենց-Վ. Տերյան-Ե. Չարենց-Պ. Սևակ ուղղությանը զուգահեռ Նարեկացի-Հ. Թումանյան-Ա. Իսահակյան-Հ. Շիրազ գիծը: Այս բնորոշումը, կարծում ենք, ինչպես թեմատիկ, գաղափարական, լեզվամտածողական, այնպես էլ գրական-պատմական իմաստով բավական ճիշտ է ուրվագծում Շիրազի տեղը նորագույն շրջանի հայ քնարերգության մեջ:

Creative and spiritual ties that connect Tumanyan and Shiraz

There are things that are typical both to H. Tumanyan's and H. Shiraz'a poetry - these are the greatest dream of humanity and the image of the ideal human being. National thinking is the source which connects these two writers. Both of them were greatly influenced by the Armenian epic. One of the stylistic devices typical to both of them is memories. Rejecting the "practical West" with its human relations and moral values, they turn to the "spiritual East" with its moral aesthetic ideals and philosophy.

¹⁶ Գ. Մահարի, Ս. Աղաբաբյան, Հ. Թամրազյան, Մ. Սարգսյան, Հ. Շիրազի մասին, էջ 7: